ցին առ նա, և 'ի կարդս բանից յառաջ բերեալ զՀայս ասէր, թէ զի՞նչ գործեն դոքա յԵրուսաղէմ, և յո՞ յուսացեալ են, զի երկիցս գրեաց Կուսակալն քակել և բառնալ զիրսն, զոր սահմանեցին, նոքա անսասա գտեալ հրամանին՝ յուսացան 'ի Դատաւորն Մուսայ, որ դատապարտեալ չոքաւ յաքսորս, այլ 'ի մտանել իմում յԵրուսաղէմ՝ քակեալ աւերեցից զայն ամենայն և կատարեցից զհրաման տեառն իմոյ։ Եւ նոցա զարհուրեալ 'ի բանից Նորա ոչ կարացին տալ պատասխանի որպէս արժան էր, միայն խոստացան ծանուցանել զայն ամենայն ծերունեացն Հայոց. և Իպրահիմ յանձն արար նոցա լինիլ միջնորդ եւ տնօրինել ինչ։ Եւ նոցա դարձ արարեալ անտի պատմեցին Պատրիարքին և Ծերունեաց զծանրացասում լինելն Բդեշխին, և զսպառնալիս փոխանակի նորին, եւ ստիպէին զնոսա գրել աղաչանս և առաքել զոմն 'ի վարդապետաց առ 'ի հաշտ առնել զերեսս Նորա։ Սակայն Հայք առ ոչ ինչ համարեցան զըսպառնալիս Նորա, զի ամենայն ինչ հրամանաւ Արքայի, հրապարակաւ և գիտութեամբ ամենեցուն եղեալ էր, նմին իրի անտես արարին զբանս նոցա, զի եթէ դուք այլազգիքդ ասեն՝ ոչ կամիք ասել զճշմարտութիւնն, մեք ոչ երբէք երկնչիմք, այլ զամենայն գրեալ ծանուցանեմք Արքայի և պաշտօնէից Նորին։ Տեսեալ այլազգեաց զհաստատուն միտս Հայոց, երկեան, գուցէ եւ ինքեանց պատահեսցի ինչ՝ որոյ վասն սկսան յորդորել զՀայս գրել առ փոխանակ Բդեշխին և շահիլ զմիտս Նորա անոտիւք, զի ոչ կարէ ասեն շիւղ ինչ խախտել յեղելոց։ Ապա 'ի սաղրելոյ Հայոց ինքեանք գրեցին առ նա, թէ զբանս ձեր յայտնեցաք Ծերունեաց, ամենայն ինչ հրամանաւ Արքայի լեալ ասեն, այժմ որպէս վայելէ մեծութեան ձերում այնպէս արարէք, և թէ՝ սոքա հպատակ են Օսմանեան Պետութեան, 'ի տուրս և 'ի հարկս առ Բդեշխն ոչ երբէք կասեալ յետս, և այլ սոցին նման բանք. գրեաց և ինքն Թէոդորոս Պատրիարք գիր ողջունի, և 'ի վերջոյ յաւել ասել՝ գլխաւորք քաղաքիս գրեցին առ ձեզ վասն խնդրոյն մերոյ, յուսամք վայելել զբարի պարգեւս բարեկամութեան ձերոյ։ Առաքեցին զայսոսիկ գրեանս, այլ զպատասխանիսն ոչ ընկալան։ Թէոդորոս Պատրիարք յառաջագոյն գրեալ էր առ